է անցնում, նստած գեղեցիկ նժոյգի վրայ, ինքը փայլում է ոսկու մէջ, ձին արծաթապատ ասպազէնքով, զէնքերը վառւում են թանկագին ակներով, ամէն կողմից մատով ցոյց են տալիս նրան, ընկերն ընկերին ասում է. «տե՛ս ի՞նչ քաջ երիտասարդ է»... Բայց ո՞ր կռոի մէջն է մտել այդ կնամարդը, վէրք տոել ու վէրք ստացել, այդ ոչ ոք չէ հարցնում: Առաջ մի երիտասարդ մինչեւ մի քանի տասնեակ մարդիկ սպանած չլինէր, մինչեւ իր մարմնի վրայ մի քանի վէրքեր ստացած չլինէր, նրան աղջիկ չէին տալ. եւ մեր աղջիկները անպատոութիւն կը համարէին երկչոտին ու անարիին իրանց փեսայ ընտրել: Հիմա դրանց նայող չկայ. հիմա երիտասարդի քսակն են շօշափում, որ տեսնեն՝ քանի ղուրուշ ունի: Ճշմարիտ քաջութիւնը կորել է, եւ նրան փոխարինել է օսմանցու թուլամորթութիւնը: Այժմ առաջոայ քուրդը չէ մնացել, եւ եթէ մարդիկ կան, այն եւս կարելի է գտնել հին սերունդի մէջ, նորը բոլորովին փչացած է: Մեր վաղեմի երիտասարդները իրանց մարմնի վրայ կրած սպիները իրանց զարդն էին համարում եւ այդ նշաններով պարծենում էին: Բայց այժմեանները հոգի են տալիս օսմանլոի շքանշանի համար, եւ գժոածի նման վազ են տալիս պաշտօնների ու աստիճանների ետեւից: Եւ օսմանցիք, օգուտ քաղելով մեր փառասէրների այդ մոլորութիւններից, վատերին առաջ են քաշում, իսկ լաւերին ետ են մղում...

Ոստանի աւերակների վրայ, ծերունի քրդի բերանով խօսում էր նահապետական ժողովրդի խաբուած ոգին: Մէկի ներկայացուցիչը բողոքում էր, միւսի ներկայացուցիչը՝ Ասլանը, լռութեամբ լսում էր...

Վերջինը հեգնութեամբ հարցրեց.

— Լաւ է, որ դու չհրապուրուեցար օսմանլոի փայլուն շքանշաններով:

— Ես աւելի պատուաւոր համարեցի այսպէս աղքատ, այսպէս չքաւոր ապրել այն գետնափոր խրճիթի մէջ, իմ քաջ նախահարց շիրիմների մօտ, քան թէ իմ կուրծքը զարդարել օսմանլոի շքանշանով, որ ստանում են շողոքորթները, կեղծաւորները, խաբեբաները միայն, վաճառելով իրանց խիղճն ու պատիւը: Ես այժմ ունեմ հինգ այծ եւ դրանով բախտաւոր եմ: Այդ հինգ այծը փոխարինում է այն հարիւրաւոր անասուններին, որ խլեց ինձանից օսմանցին: Այդ բոլորից յետոյ՝ գնալ եւ օսմանլոի ոտները լիզե՞լ, քաւ՛ լիցի, քաղցածութիւնից կը մեռնի ծերունի Օմար-աղան եւ իրան չի ստորացնի...

Նա կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց ստացած ծխախոտի համար, վերկացաւ եւ, իր երկու ցուպերի վրայ կաղալով, սկսեց ընթանալ դէպի իր խրճիթը: